ԳԵՎՈՐԳ ՄԿՐՏՉՅԱՆԸ ՎԵՐԱՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ

08.12.2025 13:24

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը 04.11.2025 թվականի նիստում քննության առնելով Փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար նշանակելու հարցը, ***որոշում*** է կայացրել ***փաստաբան Գևորգ Մկրտչյանին*** նշանակել հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի պաշտոնում:

Գևորգ Մկրտչյանը վերանշանակվել է Փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի պաշտոնում հաշվի առնելով վերջին չորս տարիների ընթացքում կատարած արդյունավետ աշխատանքը:

«Փաստաբանության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին նշանակում է փաստաբանների պալատի խորհուրդը՝ առնվազն հինգ տարվա փաստաբանական ստաժ ունեցող փաստաբանների կազմից՝ չորս տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ:

Շնորհավորում ենք Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանին՝ պաշտոնում վերանշանակվելու կապակցությամբ և մաղթում նոր հաջողություններ ու շարունակական արդյունավետ աշխատանք՝ ի նպաստ Հանրային պաշտպանի գրասենյակի զարգացման:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })